

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի դիվանը այսու լիազորված է հաղորդելու ի գիտություն մերազն ժողովրդյան, թե Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի օրհնությամբ առաջիկա սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 2-ը հրավիրված Հայաստանյայց առաքելական եկեղեցու եպիսկոպոսական ժողովի օրակարգի հարցերը լինելու են՝

1. Հայ եկեղեցու ներքին միության ամրապնդում.
2. Հայ նահատակաց սրբացում.
3. Հայ եկեղեցու բարեկարգության հարցեր.
   ա) Մաշտոցի կրճատում.
   բ) Պահոց օրերի կրճատում.
   գ) Պասկի արգիլյալ օրերի վերաքննություն.
4. Կուսակրոնության հարց.
5. Նզովքների վերացում.
6. Բոլոր եկեղեցիների հետ Զատիկը միևնույն օրում տոնելու հարց.
7. Աստվածաշնչի աշխարհաբար թարգմանություն.
8. Հայ եկեղեցին և էկումենիզմը.
9. Հայաստանյայց եկեղեցու վերաբերմունքը՝ մարդկությանը հուզող և հատկապես աշխարհի խաղաղությունը ամրապնդող հարցերի նկատմամբ:

Մայր Աթոռիս առաջադրանքն է, որ մեր սուրբ եկեղեցու նվիրապետական Աթոռների գահակալները և բոլոր եպիսկոպոսները, միասիրտ ու միախորհուրդ, սուրբ Հոգու ներշնչմամբ և մեր ժողովրդի հոգևոր ու ազգային բարձր շահերի գիտակցությամբ, ժողովում քննարկման ենթարկեն վերոհիշյալ հարցերը և եզրակացությունները ներկայացնեն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նկատառման ու կանոնական տնօրինությանը՝ ի հարկին ազգային-եկեղեցական ժողովի գումարմամբ:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

14 հունիս 1969 թ.,
Ս. Էջմիածին